

մանուկաց պահեմ ու ո՛
առաջնորդութ ու նախագործ
առաջնորդութ ու ուժութ
ու ուժութ ու ուժութ ու ուժութ

Փ Ա Ս Ի Ս Տ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(ԳԵՕԹԵՒ)

Նախնրգանք երկնքում:

ՏԵՐԸ, ԵՐԿՆԱՅԻՆ ԶՈՐՔԸ, ապա ՄԷԳԻՍՑՈՓԵԼԵՍ:

Մանում են երեք հրեշտակապետները:

ՌԱՓԱՅԵԼ

Հայնակցում է արեգակը
Խմբերգում իւր եղբայրներին,
Կատարելով իւր ընթացքը,
Նախազծած կամքով վերին:
Նրա տեսքը մեզ տալիս է ոյժ,
Անքննին են գործք Արարշին,
Հրաշալի են, սրանչելի յոյժ,
Ինչպէս էին օրն առաջին:

ԳԱՐՐԻԵԼ

Եւ երկիրը արագ-արագ
Սլանում է եթերի մէջ.

Օր ու գիշերը շարունակ
 Փոփոխում են իրար անվերջ.
 Եռվլ փրփրած ալիքներով
 Ժայռերին է զարկւում յաւէտ,
 Յափշտակած և ժայռ և ծով
 Քշում, տանում է գունդն իւր հետ:

ՄԻ-ՔԱՅԵԼ

Եւ մըրիկներ շառաչելով
 Ցամաքի ու ծովի վերայ,
 Ճուրջ աւերմունք տարածելով,
 Կաղմում են մի զօրեղ շղթայ:
 Յանկարծ վառում է կայծակը
 Եւ հրկիզում է իւր ուղին.
 Բայց մեզ, տէր, քո արեգակը
 Ժպտում է, փառք նրա ստեղծողին:

ԵՐԵ-ՔԸ ՄԻԱՅԻՆ

Այդ տեսքը մեզ տալիս է ոյժ.
 Անքննին են գործք Արարշին,
 Հրաշալի են, սքանչելի յոյժ,
 Խչպէս էին օրն առաջին:

ՄԻԳԻՍՏՈԳԻԼԿԻՍ

Ահա, տէր, կրկին մօտենում ես մեզ,
 Եւ հարցնում, ինչպէս է մեր նիստ ու կաց,
 Երբեմն ինձ տեսնել հաճելի էր քեզ,
 Ետառաներիդ հետ կամ այժմ քո դիմաց,
 Պերճախօս լինել չեմ կարող, ներիր,
 Թէ և ինձ ծաղրէր ներկայ կաճառը.

Անշուշտ, ծիծաղել թէ կամենայիր,
Կը ծիծաղացնէր քեղ էլ իմ ճառը:
Արև, աստղերին անտեղեակ եմ ես,
Մարդկանց տանջանքին եմ ականատես:
Երկրի փոքր աստուածն է նոյնը, ինչ որ
Առաջին օրն էր—էակ խելացնոր:
Գուցէ լաւ ապրէր մարդը հողածին,
Թէ չէիր տուել նրան կայծն երկնային—
Խելքը, որ միայն գործ է ածում նա,
Որ անասնից էլ անասուն դառնայ:
Նա, թէ թոյլ կը տայ ձեր մեծութիւնը,
Ունի ճալուակի բնաւորութիւնը,
Որ թռչում, ոստնում է խոտերի մէջ
Եւ իւր հին երգը միշտ երգում անվերջ:
Եւ թող միշտ պարկած մնար նա խոտում.
Ո՛չ, ամեն ցելսում իւր քիթն է խոթում:

ՏԵՐԸ

Ուրիշ բան չունիս զու ինձ ասելու。
Գալիս ես միայն միշտ գանգատուելին,
Միթէ երկրի վրայ ամեն բան վատ է:

ՄԵԳԻՍՏՕՖԵԼԻՍ

Այն, այդ մասին կարծիքս հաստատ է:
Մարդիկ այնքան խեղճ են այնտեղ, թշուառ,
Որ նոցա տանջելն է ինձ շատ դժուար:

ՏԵՐԸ

Ճանաչնում ես զու այնտեղ Փառւատին:

ՄԵԳԻՍՏՕՖԵԼԻՍ

Գոկտօրին, տէր իմ,

ՏԵՐԸ

**Այս, իմ ստրկին
ՄԷԳԻՍՏՕՓԷԼԵՍ**

Տարօրինակ է ծառայում նա ձեզ:
Ուսում խմում չէ հողեղինի պէս:
Ճարունակ ձգտում է հեռուն ու վեր.
Մասսամբ ըզգում է իւր խելառութիւն:
Նա պահանջում է երկնքից աստղեր,
Եւ երկրից ամեն մի վայելչութիւն,
Եւ ոչ մօտիկը, և ոչ էլ հեռուն
Չեն յագեցնում նրա կուրծք երերուն:

ՏԵՐԸ

Թ'և ծառայում է նա այժմ ինձ անճիշտ.
Բայց շուտ նրա միտքը կը լուսաւրուի:
Զէ որ պարտիզպանն անշուշտ գիտէ միշտ,
Երբ պիտի ծառը պաղով դարդարուի:

ՄԷԳԻՍՏՕՓԷԼԵՍ

Գրազն ինչ է, որ դուք նորան կը կորցնէք,
Եթէ թոյլ կը տաք ինձ ու կը յանձնէք,
Որ նորան տանեմ իմ ճանապարհով:

ՏԵՐԸ

Ես չեմ արգելի, եղիր ապահով,
Քանի ապրում է նա երկրի վերայ:
Մարդը, ձգտելով, մոլորում է նա:

ՄԷԳԻՍՏՕՓԷԼԵՍ

Ճատ չնորհակալ եմ. մեռեների հետ
Երբէք կամեցել չեմ գործ ունենալ,
Վարդագոյն այտեր սիրել եմ յաւէտ,
Դիակից ես ինչ կարող եմ ստանալ.
Կատուն սիրում է մկան հետ խաղալ:

ՅԵՐԵ

Լաւ, թոյլ եմ աալիս, գործիր անդադար,
չեռացրու նորան իւր սկզբնաղբիւրից,
եւ, թէ կարող ես, քաշիր հետդ տար,
չանելով նորան իւր ճանապարհից.
եւ համոզուելով մնա ամօթհար,
Որ բարի մարդը իւր մուժ ընթացքում
Ճշմարտութիւնը պահում է կրծքում:

ՄԷԳԻՍՏՕՖԻԼԻ

Ես համաձայն եմ, չի տեսի երկար.
Ես երկիւղ չոնիմ գրազիս համար:
Երբ նպատակիս համնեմ իմ ջանքով,
Թոյլ տուէք տօնեմ յաղթանակս ես.
Հող պիտի ուտի նա ախորժանքով
Բազմահոչակ օձ մօրաքրոջս պէս:

ՅԵՐԵ

Ազատ, համարձակ կարող ես գործել.
Քեզ նմաններին ատել չեմ փորձել:
Բոլոր ապստամբ սև ողիններից
Ամենից սակաւ դու ես ընդդէմ ինձ:
Մարդը թմրում է, չէ միշտ ջանասէր,
Նա շատ է սիրում անպայման հանգիստ.
Այդ պատճառով նրան տալիս եմ ընկեր
Սատանայ, որ նրան դրդէ, ցնցէ խիստ: —
Իսկ դուք, Աստուծոյ որդիք լուսաւոր,
Դուք ուրախացէք վեհ գեղեցկութեամբ.
Այն, ինչ որ պիտի լինի, ծնի նոր
Պատէ ձեզ սիրոյ գրկախառնութեամբ,
Եւ ինչ որ թւում է կասկածելի,
Ամրացրէք մտքով անսասանելի:

(Երկինքը փակւում է, հրեշտակապետները բաժան-
ում են զանազան կողմեր)

ՄԵՖԻՍՏՕՖԵԼԻՍ (մենակ)

Երբեմն ծերին յօժար եմ տեսնել,
Եւ զգուշանում եմ նորան բարկացնել,
Ի՞նչ լաւ է, երբոր սրա պէս մի մեծ պետ
Մարդավարի է խօսում դմի հետ.

ԴԷՐԹԻ ԲԱՐԽՈՒԻՇԱՐԵԱՆՑ:

